Հաստատում եմ՝

Տնօրենի և վարչատնտեսական մասի
համակարգողի պարտականությունները կատարող Ն. Հովհաննիսյան

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Թեմատիկ պլանավորում տարեկան
34 ժամ
շաբաթական 1 ժամ
/19 շաբաթ/

Ուսուցիչ՝ Ա. Խաչատրյան,
ՀՀ Արմավիրի մարզ
Դպրոց՝ <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

2023-2024 ուստարի

Դասագիրք՝ Երաժշտություն **4 -րդ դասարան**
Հեղ.՝ **Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան**

Քննարկվել է մասնախմբի թիվ -------- նիստում

Մասնախմբի նախագահ՝ Գ. Ավագյան

Ստուգված է :

Տնօրենի տեղակալ՝ Ռ. Գասպարյան

Դաս	էջ	Թեմա 4. **Իմ ժողովրդի երաժշտությունը** (17 ժամ)	ժամ
Նպատակ		**Ծանոթացում:** հայ ազգային երաժշտությանը, հայ ժողովրդական, ծիսական, հոգևոր և կոմպոզիտորական երգերին **Զարգացնե**լ երաժշտությունը սիրելու և հասկանալու կարողությունը **Ձևավորել** պատկերացումներ հայ ազգային երաժշտության, նրա տեսակների մասին **Ձևավորել** հմտություններ ազգային երաժշտության տեսակները և նրանց առանձնահատկություններն իմանալու, ճանաչելու և տարբերելու համար: **Առաջացնել** սեր և հետաքրքրություն ազգային երաժշտության նկատմամբ **Ունկնդրել,** վերլուծել, մեկնաբանել հայ ազգային երաժշտությունը Սովորել և կատարել հայ ժողովրդական, ծիսական, հոգևոր և կոմպոզիտորական երգեր **Արժևորել** ազգային երաժշտությունը:	
Վերջնարդյունք		**Ներկայացնել,** երգել /մենակ կամ խմբով/ հայ ժողովրդական և կոմպոզիտորական երգեր՝ ճիշտ կեցվածքով և շնչառությամբ, մաքուր ինտոնացիայով, հստակ ռիթմով, արտահայտիչ, անսամբլային զգացողությամբ, հետևելով խմբավարի շարժումներին: **Ճանաչի և գնահատի** հայ ժողովրդական և կոմպոզիտորների երաժշտությունը Կատարումը ուղեկցի պարային կամ ռիթմական շարժումներով **Վերլուծի,** ներկայացնի հայ ազգային երաժշտական ստեղծագործության կառուցվածքին բնորոշ առանձնահատկությունները: **Նկարագրի** ազգային երաժշտությունից ստացած իր տպավորությունները գրագետ կապակցված խոսքով **Կարևորի հայ ազգային երաժշտությունը:**	
1		Ունկնդրել և ուսուցանել հայկական ժողովրդական «Հոյ, Նազան» և «Օրորոցային» երգերը	1
2		Կոմիտաս: Կյանքն ու ստեղծագործությունը Քնարական երգեր:Ծանոթացնել լարային կվարտետին	1

3		Աշխատանքային երգեր: Ունկնդրել «Քաղհան», «Ճախարակ» երգերը	
4		Ծիսական երգեր: Ուսուցանել «Թաագվորի մեր, դուրս արի» երգը	1
5--6		Պանդխտության և հայրենասիրական երգեր:ՈՒնկնդրել հայկ. Ժող. «Կռունկ» երգը՝ Կոմիտասի մշակմամբ: Ուսուցանել «Կովկասի քաջեր» երգը	2
7		Արամ Խաչատրյան: ՈՒնկնդրել Խաչատրյանի «Ջութակի կոնցերտը»: Ուսուցանել «Քելե, քելե». Երգը:	1
8		ՈՒսուցանել «Փափուռի» երգը; Ծանոթացնել 16-րդական նոտային	1
9		Գրիգոր Եղիազարյան: Ուսուցանել հայկ. Ժող. «Նուբար». երգը	1
10		Աշոտ Սաթյան: ՈՒնկնդրել «Արարատյան դաշտի առավոտը», «Մարտիկի երգը» Ուսուցանել Սաթյանի «Աշխատանքային երգը»	1
11		ՈՒնկնդրել և ուսուցանել հայկ. Ժող. «Հեյ, իմ Նազանի յարը» երգը	1
12		Մանկական երգեր: Ուսուցանել «Սար-սար» երգը, երգել նոտաներոով, երկձայն	1
13		Ռոմանոս Մելիքյան: ՈՒսուցանել «Ծիտիկի սերը». Երգը:Ծանոթացնել՝ հայկ. Ժող. նվագարաններին	1
14		Առնո Բաբաջանյան:Ուսուցանել «Մեր սիրելի Երևան» երգը: Ունկնդրել «Հերոսական բալադը»	1
15		Ալեքսանդր Հարությունյան: «Հայկական ռապսոդիա»	1
16-17		Դաս-համերգ,երաժշտական վիկտորինաներ,ժամանցներ և այլն:	2
18		Շտոգարենկոյի հայկական էսքիզները:	
19		Թեմայի ամփոփում	

Նպատակ		**Ծանոթացում՝** ծիսական,հայ և օտարազգի ժողովուրդների, սփյուռքահայ կոմպոզիտորների երաժշտության,ժողովրդական նվագարանների,ամբողջ և թե տևողությամբ նոտաների հետ: **Սովորել՝** ծիսական,հայ և օտար ժողովուրդների,կոմպոզիտորների երգերը: **Զարգացնել՝** երգերի բնույթին համապատասխան և ճիշտ հնչերանգով կատարման կարողությունը: **Ձևավորել՝** հայ և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություններում օգտագործված ժողովրդական երգերը ճանաչելու հմտություններ: **Ձևավորել և զարգացնել՝** երաժշտական նվագարաններով ռիթմական նվագակցություն կատարելու,թեմային համապատասխան քառատող և մեղեդի հորինելու կարողությունները: **Առաջացնել՝** սեր և հարգանք հայ և այլ ազգերի երաժշտության հանդեպ: **Ունկնդրել՝** վերլուծել,նշել բնորոշ առանձնահատկությունները: Մեկնաբանել հայ և այլ ազգերի երաժշտության փոխազդեցության մասին:	
Վերջնարդյունք		**Ներկայացնել,** երգել միաձայն կամ երկձայն երգերը բնույթին համապատասխան,արտահայտիչ, մաքուր հնչերանգով: **Ճանաչել և գնահատել՝** ազգային երաժշտությունը և նրա տեղն ու դերը հայ և համաշխարհային երաժշտության մեջ: **Վերլուծել,** ներկայացնել երաժշտական ստեղծագործությանը բնորոշ առանձնահատկություններն ու երաժշտական արտահայտչական միջոցները: **Նկարագրել՝** երաժշտական ստեղծագործությունից ստացած տպավորություններն ու արտահայտել սեփական կարծիքն ու վերաբերմունքը:	
18	18-19	**Ծիսական երգեր** ՈՒսուցանել՝ հայկ.ժող. «Ավետիս» երգը: ՈՒնկնդրել Սուրբ ծննդյան երգեր:	1
19-20	54-55	ՈՒսուցանել ռուս.ժող. «Здравствуй,гостья-зима» երգը: ՈՒնկնդրել հայկ.ժող. «Քոչարի»,ռուսական «Կամարինյան» և կովկասյան «Լեզգինկա» պարերը, հատված Ա.Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտից, Մ.Մազմանյանի «Մայրիկին յազմա բերին» խմբերգը:	2
21	56-57	**Սայաթ-Նովա** ՈՒսուցանել Սայաթ-Նովայի «Դուն էն հուրին իս» երգը: ՈՒնկնդրել «Դուն էն գլխեն» երգը, Ա.Սպենդիարյանի «Էնգելին», «Երևանյան էտյուդներից»:	1
22	58-59	**Ալեքսանդր Սպենդիարյան** ՈՒսուցանել «Գնաց աշուն» հայկ.ժող.երգը: ՈՒնկնդրել հատվածներ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերից, «Ալմաստ» օպերայից:	1
23	20	ՈՒսուցանել հայկ.ժող. «Ջա՛ն,լե՛,լե՛» երգը: ՈՒնկնդրել «Բարեկենդանի» երգեր:	1
24	62-63	**Սերգեյ Բալասանյան** ՈՒսուցանել «Հովիվ» երգը,երկձայն: ՈՒնկնդրել հատված «Լեյլի և Մեջնուն» բալետից և «Ես մի պուճուր հոտաղ եմ» դաշնամուրային մանրանվագը:	1

25	64-67	**Լորիս Ճգնավորյան** ՈՒսուցանել «Ծաղիկ ջան» հայկ. ժող.երգը: ՈՒՆկնդրել հատվածներ «Ռոստոմ և Զոհրաբ» օպերայից: Ծանոթացնել քառորդ կետով տևողության նոտայի հետ:	1
26	68-69	**Ծառլ Ազնավուր** **Ժորժ Կառվարենց** ՈՒՆկնդրել «Քեզ համար,Հայաստա՛ն», Ծառլ Ազնավուրի «Իզաբել», «Ավե Մարիա», «Երկու կիթառ» երգերը:	1
27	70-72	**Ալան Հովհաննես** ՈՒսուցանել Ռիչարդ Ռոջերսի «Երաժշտության հնչյունները» երգը: ՈՒՆկնդրել «Վասպուրական» երգը և հայկ.ժող.երգերի թեմաներով գրված դաշնամուրային մանրանվագները:	1
28	23	ՈՒսուցանել հայկ.ժող. «Զատիկ» երգը: ՈՒՆկնդրել Զատկական երգեր,կազմակերպել «Զատկի» տոնակատարությունը:	1
29	73-74	ՈՒսուցանել «Զեյթունցիների քայլերգը» երգը: ՈՒՆկնդրել Իպոլիտով-Իվանովի «Հայկական ռապսոդիան»:	1
30	76-77	ՈՒսուցանել Կոմիտասի «Ծողեր ջան» երգը: ՈՒՆկնդրել «Ծողեր ջան» երգի երգչախմբային և լարային կվարտետի կատարումները և Ա.Ծտոգարենկոյի «Հայկական էսքիզները»:	1
31	77	ՈՒսուցանել «Веснянка» ուկր.ժող.երգը: ՈՒՆկնդրել Պ.Չայկովսկու «Դաշնամուրային կոնցերտից» մի հատված:	1
32-33	22-24	**Համբարձման և Վարդավառի տոներ** ՈՒսուցանել հայկ.ժող. «Համբարձման երկուշաբթի», «Խնկի ծառ», «Սոնա յար» երգերը: ՈՒՆկնդրել հատվածներ Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերայից՝ «Համբարձում յայլա» և այլն:	2
34		Կիսամյակի ամփոփում՝ դաս-համերգ, երաժշտական վիկտորինաներ,ժամանցներ և այլն:	1

Դաս. 1: Ունկնդրել և ուսուցանել հայկական ժողովրդական **<<<Հոյ, Նազան>> և <<Օրորոցային>>** երգերը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչ է երգը
2. Ինչ ենք հասկանում հայկական ժողովրդական երգ ասելով
3. Ինչպիսի երգ է <<<Հոյ Նազան >> երգը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- Որ երգը դա երաժշտության համեմատաբար պարզ տարատեսակ է:
- Երգը կարող է կատարվել և մեկ կամ մի քանի հոգու, և երգչախմբի կողմից:

- Երգերը երգվում են և երաժշտական գործիքների նվագակցությամբ, և առանց:
- **<<Հոյ Նազանը>>** պարերգ է

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Տարբերել ժողովրդական երգը
<<Հոյ Նազան>> երգը երգել և կատարել համապատասխան պարային շարժումներ
Ճանաչի ժողովրդական մեկ կամ երկու նվագարան

Դաս. 2 Կոմիտաս: Կյանքն ու ստեղծագործությունը
Քնարական երգեր: Ծանոթացնել լարային կվարտետին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞վ է Կոմիտսը և ինչ գործունեություն է ծավալել
2. Ի՞նչ դեր է ունեցել հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադրման գործում
3. Ինչ է իրենից ներկայացնում քնարական երգը;

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
Որ Կոմիտասը եղել է հայ կոմպոզիտոր:
Որ սովորել է Էջմիածնի Գևորգյան Ճեմարանում:
Մշակել է հայ ժողովրդական երգերը :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Պատմել Կոմիտասի մասին:
Ճանաչի Կոմիտասի որևէ երգ

Դաս. 3: Աշխատանքային երգեր:
Ունկնդրել << Քաղհան>> , <<Ճախարակ>>երգերը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ձեր կարծիքով որ երգերն են կոչվում աշխատանքային
2. Ինչպիսի երգեր գիտեք աշխատանքի մասին
3. Կարո՞ղ եք երգ հորինել աշխատանքային

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

Որ աշխատանքին ու աշխատավոր մարդուն նվիրված երգերը կոչվում են աշխաատանքային երգեր:
Որ աշխատանքային երգերի մշակումները հիմնականում կատարել է Կոմիտասը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Պատմել աշխատանքային երգերի մասին
Ներկայացնել Կոմիտասի մշակումներ աշխատանքային երգերի մասին
Կարողանա երգել <<Ճախարակ>> երգը

Դաս. 4: Ծիսական երգեր:

Ուսուցանել <<Թաագվորի մեր, դուրս արի>> երգը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Որ երգերն են կոչվում ծիսական
2. Ինչ բան է ծեսը, ծիսակատարությունը
3. Ինչ տոներ գիտեք, որ դարերով փոխանցվել են մեզ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

Որ ունենք հայ հինավուրց ազգային ծիսական տոնակատարություններ, որոնց համար գրվել են երգեր և այդ երգերին անվանում ենք **ծիսական երգեր:**

Ծիսական երգերը նվիրված են ժողովրդական ավանդույթներին և արարողություններին: Դրանք հարսանեկան,տարբեր ծեսերին ու տոնակատարություններին նվիրված երգեր են.Սուրբ Ծնունդ,Բարեկենդան,Համբարձում,Զատիկ,Վարդավառ և այլն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Կարճ տեղեկություն հաղորդել ծիսական երգերի մասին:

Սովորի և կարողանա դասագրքի ծիսական երգերը ճիշտ երգել:

Ունկնդրի տարբեր ծեսերին նվիրված երգեր

Դաս. 5 – 6 : Պանդխտության և հայրենասիրական երգեր:
ՈՒնկնդրել հայկ. Ժող. <<Կռունկ>> երգը ՝ Կոմիտասի մշակմամբ:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչ է պանդխտությունը
2. Ինչպիսի երգեր են հայրենասիրական երգերը
3. Հայրենասիրությունը ինչ է ձզ համար
4. Ինչու ենք կռունկին համեմատում պանդխտության հետ
5. Ով է Անդրանիկը : Ինչ սխրանքներ է արել
6. Ինչպիսի երգ է <<Կովկասի քաջեր>> երգը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

Որ ժողովուրդը ստիպված է եղել թողնել իր հայրենի տունը և ապրել օտար հողում: Այդ մարդկանց անվանել են պանդուխտներ;
Պանդուխտ նշանակում է հայրենիքին կարոտ մարդ
Որ կռունկը հենց պանդխտության հետ են միավորում

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Պատմել պանդխտության և հայրենասիրության մասին
Սովորի երգել <<Կովկասի քաջեր>> երգը
Բնութագրի Անդրանիկի սխրանքները:
Ներկայացնի իր իմացած հայրենասիրական երգերից

Դաս. 7 : Արամ Խաչատրյան:
ՈՒնկնդրել Խաչատրյանի << Ջութակի կոնցերտը>.:
Ուսուցանել <<Քելե, քելե >. Երգը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞վ է եղել Արամ Խաչատրյանը:
2. Ինչ կարող եք ասել նրա մասին
3. Ինչպիսի երգ է <<Քելե, քելե >> երգը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Արամ Խաչատրյանը եղել է հայ մեծանուն կոմպոզիտոր:
Արամ Խաչատրյանը ծնվել է Թիֆլիսում:
<<Քելե, քելե >> երգը ժողովրդական երգ է

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Խոսել Արամ Խաչատրյանի մասին
Ներկայացնել ստեղծագործություններից գոնե մեկը
Երգի Արամ Խաչատրյանի երգերից մեկը

Դաս. 8 ՈՒսուցանել <<Փափուռի >> երգը;
Ծանոթացնել 16-րդական նոտային

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար
Ինչպիսի երգ է <<Փափուռի>> երգը
Նոտաների տևողության մասին ինչ կարող եք ասել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Նոտաներն ունեն տևողություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Դաս. 9 Գրիգոր Եղիազարյան:
Ուսուցանել հայկ. Ժող. <<Նուբար >> Երգը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար
Ով է Գրիգոր Եղիազարյանը
Ինչ ժողովրդական երգեր գիտեք
<<Նուբար>> երգը ինչպիսի երգ է

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Որ Գրիգոր Եղիազարկայնը կոմպոզիտոր է
Գրել է երգեր,
<<Նուբար >> երգը պարերգ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Ներկայացնել Գրիրոր Եղիազարյանի կյանքը
Հասկանա ժողովրդական երգը
Կարողանա <<Նուբար>> երգը երգել կամ պարային
երաժշտությանը համապատասխան շարժումներ կատարել

Դաս. 10 Աշոտ Սաթյան:
ՈՒնկնդրել <<Արարատյան դաշտի առավոտը>>,
<< Մարտիկի երգը>>
Ուսուցանել Սաթյանի <<Աշխատանքային երգը>>

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար
Ո՞վ է կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը
Ի՞նչ է նկարագրված <<Մատիկի երգը>> -ում

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Արա Սաթյանը կոմպոզիտոր է:Գրել է երգեր:
<<Մարտիկի >> երգը գրվել է պատերազմի տարիներին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Ներկայացնել Արամ Սաթյանի կյանքը:
Հասկանա, թե որն է աշխատանքային երգը
Երգել <<Մարտիկի երգը>>

Դաս. 11 ՈՒնկնդրել և ուսուցանել հայկ. Ժող. <<<Հեյ, իմ Նազանի յարը>> երգը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

Ինչպիսի երգ է <<<Հեյ, իմ Նազանի յարը>> երգը

Ո՞րն է կոչվում ժողովրդական երգ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

<<<Հեյ, իմ Նազանի յարը>> երգը ժողովրդական երգ է, նաև պարերգ:

Ժողովրդական երգը դա ժողովրդի ստեղծած երգն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Ներկայացնել ժողովրդական երգի մասին մի քանի նախադասությամբ:

Երգել <<<Հեյ, իմ Նազանի յարը>> երգը

Դաս. 12 Մանկական երգեր:
Ուսուցանել <<Սար-սար>> երգը, երգել նոտաներով,

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար
Ո՞րն է կոչվում մանկական երգ
Ինչպիսի՞ մանկական երգեր գիտեք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Մանկական երգերը մանուկների համար գրված երգեր են;
Մանկական երգերը կարող են լինել տարբեր բնույթի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Խոսել մանկական երգերի մասին:
Ներկայացնել ևս երկու մանկական երգ:

Դաս. 13 Ռոմանոս Մելիքյան :
Ծանոթացնել՝ հայկ. Ժող. Նվագարաններին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար
Ո՞վ է Ռ. Մելիքյանը:
Ինչ ստեղծագործություններ ունի գրված:
Ինչպիսի՞ ժողովրդական նվագարաններ կան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Որ Ռ. Մելիքյանը մեծ երաժիշտ է:
Գրել է նաև ռոմանսներ:
Ամեն ժողովուրդ ունի նաև իր ստեղծած նվագարանները:
Դրա համար անվանում են նաև ժողովրդական նվագարաններ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Ռոմանոս Մելիքյանի մասին պատմել:
Հասկանա որն է ռոմանսը :
Թվարկի ժողովրդական մի քանի նվագարանների անուններ:

Դաս. 14 Առնո Բաբաջանյան:
Ուսուցանել <<Մեր սիրելի Երևան>>երգը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար
Ինչ կարող եք ասել Բաբաջանյանի մասին:
Ինչ երգեր եք լսել:
Ո՞ր ֆիլմում եք լսել Բաբաջանյանի երգերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Որ Առնո Բաբաջանյանը մեծ կոմպոզիտոր է:
5 տարեկանից արդեն նրա տաղանդը երևացել է:
Գրել է ֆիլմերի համար երաժշտություն, երգեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Մի քանի նախադասությամբ ներկայացնել Բաբաջանյանի կյանքը:
Երգել կամ ասել Բաբաջանյանի երգերից:

Դաս. 15 Ալեքսանդր Հարությունյան:
<<<Հայկական ռապսոդիա>>>

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար
Ո՞վ է Ալեքսանդր Հարությունյանը
Լսել եք <<<Հայկական ռապսոդիա>>>-ն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Ալեքսանդր Հարությունյանը երաժիշտ է :
Գրել է <<<Հայկական ռապսոդիա>>>- ն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Խոսել Ալեքսանդր Հարությունյանի մասին:
Մեկնաբանել <<<Հայկական ռապսոդիա>>>-ն ինչ է

Դաս. 16-17: Թեմայի ամփոփում:
Բանավոր հարցում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար
Ինչ անցանք այս կիսամյակում
Որ կոմպոզիտորների մասին իմացանք
Ինչ երգեր անցանք

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
Կոմպոզիտորների անուններ:
Նրաց կյանքի ու ստեղծագործության մասին պատմի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Բանավոր հարցման միջոցով ամփոփի անցածը:
Երգի երկու երգ անցած դասերին սովորած
Մեկնաբանել որևէ ստեղծագործություն:

Ծանոթություն: Քանի որ գրքի հեղինակները «Ծիսական երգեր» բաժինը զետեղել են առաջին կիսամյակի ծրագրի մեջ,որը չի համապատասխանում եկեղեցիական տոնացույցին, ուստի այդ ժամերը նպատակահարմար է անցկացնել երկրորդ կիսամյակում՝ համապատասխան տոների ժամանակ:

Թեմատիկ պլան

Դաս. 18: Ծիսական երգեր

ՈՒսուցանել՝ հայկ.ժող. «Ավետիս» երգը:

ՈՒնկնդրել Սուրբ ծննդյան երգեր:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է նշանակում ավետիս:
2. Ո՞րն է Սուրբ ծննդյան տոնի խորհուրդը:
3. Սուրբ ծննդյան ի՞նչ երգեր գիտեք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ավետիս նշանակում է բարի լուր:
2. Սուրբ Ծնունդը Հիսուս Քրիստոսի ծննդյան տոնն է:
3. Սուրբ ծննդյան երգերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Ներկայացնել Սուրբ Ծնունդին հայկական գյուղերում եղած սովորության մասին:
Կատարել Սուրբ ծննդյան երգերից:

Դաս. 19-20: ՈՒսուցանել ռուս.ժող. «Здравствуй,гостья-зима» երգը:

ՈՒնկնդրել հայկ.ժող. «Քոչարի», ռուսական «Կամարինյան» և կովկասյան «Լեզգինկա» պարերը, հատված Ա.Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտից, Մ.Մազմանյանի «Մայրիկին յազմա բերին» խմբերգը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչ բնույթ ունի «Здравствуй,гостья-зима» ռուս.ժող. երգը:
2. Ինչ նմանություն և տարբերություն ունեն «Քոչարի», «Կամարինյան», «Լեզգինկա» պարերը:
3. Որ երգերն են օգտագործել Ա.Խաչատրյանը իր «Դաշնամուրային կոնցերտում» և Մարտին Մազմանյանը իր «Մայրիկին յազմա բերին» խմբերգում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Здравствуй, гостья-зима» ռուս.ժող. երգը, ունի պարային բնույթ, ուրախ տրամադրություն, աշխույժ տեմպ:

2. «Քոչարի», «Կամարինյան», «Լեզգինկա» պարերը նման են նրանով,որ երեքն էլ ուրախ տրամադրությամբ,արագ տեմպով կրակոտ պարեր են: Տարբերվում են հնչերանգներով, որոնցով էլ տարբերում ենք այս երեք պարերը:

3. Ա.Խաչատրյանը իր «Դաշնամուրային կոնցերտում» օգտագործել է «Ավարա» երգը: Մարտին Մազմանյանը իր «Մայրիկին յազմա բերին» խմբերգում օգտագործել է «Մուշա» երգը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Արտահայտիչ կատարել «Здравствуй,гостья-зима» ռուս. ժող. երգը:
«Քոչարի», «Կամարինյան», «Լեզգինկա» պարերը ունկնդրել, վերլուծել և բնութագրել:
Զգալ և ներկայացնել «Ավարա» և «Մուշա» երգերի արտահայտչամիջոցները:

Դաս. 21: Սայաթ-Նովա

ՈՒսուցանել Սայաթ-Նովայի «Դուն էն հուրին իս» երգը:
ՈՒնկնդրել «Դուն էն գլխեն» երգը, Ա.Սպենդիարյանի «Էնգելին», «Երևանյան էտյուդներից»
:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ներկայացնել Սայաթ-Նովայի ստեղծագործական ուղին:
2. Սայաթ-Նովայի ո՞ր երգերն եք լսել:
3. Սայաթ-Նովայի ո՞ր երգն է օգտագործել Ա.Սպենդիարյանը իր «Երևանյան էտյուդներից», «Էնգելի» ստեղծագործության մեջ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սայաթ-Նովայի կենսագրությունը:
2. Սայաթ-նովայի երգերից («Դուն էն հուրին իս», «Դուն էն գլխեն» և այլն):
3. Ա.Սպենդիարյանը իր «Էնգելի» ստեղծագործության մեջ որոշակի փոփոխություններով օգտագործել է Սայաթ-Նովայի «Դուն էն գլխեն» երգը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Նշել Սայաթ-Նովայի տեղն ու դերը Անդրկովկասի ժողովուրդների աշուղական երգարվեստում:
ՈՒնկնդրել, վերլուծել և մեկնաբանել Սայաթ-Նովայի երգերից ստացած տպավորություններն ու բնորոշ առանձնահատկությունները:

Դաս. 22: Ալեքսանդր Սպենդիարյան

ՈՒսուցանել «Գնաց աշուն» հայկ.ժող.երգը:
ՈՒնկնդրել հատվածներ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերից, «Ալմաստ» օպերայից:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.
1.Ներկայացնել Ա.Սպենդիարյանի ստեղծագործական ուղին:
2.Ա.Սպենդիարյանի ո՞ր ստեղծագործություններում է օգտագործված ժողովրդական երաժշտությունը:
3.Ու՞մ բանաստեղծական տողերն է նկարագրում Ա.Սպենդիարյանը իր «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
1.Որ Ա.Սպենդիարյանը հայ դասական երաժշտության հիմնադիրներից է:
2. Ա.Սպենդիարյանը օգտագործել է ժողովրդական երաժշտությունը «Ալմաստ» օպերայում, «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերում և այլն:
3.Որ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի միջոցով կոմպոզիտորը նկարագրում է ռուս մեծ բանաստեղծ Լերմոնտովի բանաստեղծության մեջ նկարագրված բնապատկերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Ներկայացնել Ա.Սպենդիարյանի կենսագրությունը:
Ճանաչել «Ալմաստ» օպերայում և «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերում օգտագործված ժողովրդական մեղեդիները և մեկնաբանել, թե ինչ փոփոխությունների են ենթարկվել:
Վերարտադրել «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի ունկնդրումից ստացած տպավորությունները և համեմատել բանաստեղծության տողերի հետ:

Դաս. 23: ՈՒսուցանել հայկ.ժող. «Ջա՛ն,լե՛,լե՛» երգը:

ՈՒնկնդրել «Բարեկենդանի» երգեր:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է Բարեկենդանը:
2. Բարեկենդանի տոնին նվիրված ի՞նչ երգեր գիտեք:
3. Որո՞նք են Բարեկենդանին նվիրված երգերի բնորոշ առանձնահատկությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բարեկենդանը գարնանամուտի տոն է՝կապված բնության զարթոնքի հետ:Այս տոնին մարդիք երգել,պարել,խաղացել և թատերականացված արարողություններ են ներկայացրել:
2. Բարեկենդանի տոնին նվիրված երգերից են «Ջա՛ն,լե՛,լե՛», «Իլիլի՛-դիլիլի՛» և այլն:
3. Որ բնորոշ առանձնահատկություններն են՝ ուրախ տրամադրությունը,չափավոր կամ աշխույժ տեմպը, ռիթմիկ պատկերների բազմազանությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Ներկայացնել Բարեկենդանի տոնը:
Երգել և վերլուծել բարեկենդանի տոնին նվիրված երգերը:

Թեմատիկ պլան

Դաս. 24: Սերգեյ Բալասանյան

ՈՒսուցանել «Հովիվ» երգը, երկձայն:
ՈՒնկնդրել հատված «Լեյլի և Մեջնուն» բալետից և
«Ես մի պուճուր հոտաղ եմ» դաշնամուրային մանրանվագը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.
1. Ի՞նչ դերակատարություն է ունեցել Ս.Բալասանյանը տաջիկական երաժշտարվեստում:
2. Ո՞վքեր են ստեղծում հայ ազգային երաժշտական մշակույթը:
3. ՈՒնկնդրել «Լեյլի և Մեջնուն» բալետից հատված և ներկայացնել ստացած տպավորությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
1. Որ Ս.Բալասանյանը սփյուռքահայ կոմպոզիտոր է,տաջիկական թատերական երաժշտության առաջին դասական կոմպոզիտորը:
2. Որ հայ ազգային երաժշտական մշակույթը կազմում են ժողովրդական,հայրենիքի և սփյուռքի կոպմոզիտորների երաժշտական ստեղծագործությունները:
3. Երաժշտական արտահայտչամիջոցները և բնութագրի «Լեյլի և Մեջնուն» բալետից հատվածը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Հակիրճ տեղեկություն տալ Ս.Բալասանյանի կենսագրությունից:
Նշել սփյուռքահայ կոմպոզիտորներից մի քանիսին:
Մեկնաբանել սփյուռքահայ կոմպոզիտորների ազդեցությունը հայկական և օտար երաժշտարվեստում:

Դաս. 25: Լորիս Ճգնավորյան

ՈՒսուցանել «Ծաղիկ ջան» հայկ. ժող.երգը:
ՈՒնկնդրել հատվածներ «Ռոստոմ և Զոհրաբ» օպերայից:
Ծանոթացնել քառորդ կետով տևողության նոտայի հետ:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.
1. Ի՞նչ գործունեություն է ծավալել Լ.Ճգնավորյանը Իրանում և Հայաստանում:
2. Ձեռքի նշաններով ցույց տալ դո հնչյունաշարը:
3. Ինչպե՞ս է կատարվում կետով նոտան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
1. Լորիս Ճգնավորյանի կենսագրությունը:
2. Ձեռքի նշաններով ցույց տալ նոտաները:
3. «Ծաղիկ ջան» երգի մեջ եղած կետով նոտան ճիշտ երգել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Պատմել Լորիս Ճգնավորյանի մասին և նրա «Ռոստամ և Զոհրաբ» օպերայից ստացած տպավորությունների մասին:
Ճիշտ կատարել «Ծաղիկ ջան» երգի ռիթմը և ձեռքի նշաններով երգել երկձայն:

Դաս. 26: Շառլ Ազնավուր
Ժորժ Կառվարենց

ՈՒնկնդրել «Քեզ համար,Հայաստա՛ն», Շառլ Ազնավուրի «Իզաբել», «Ավե Մարիա», «Երկու կիթառ» երգերը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.
1.Որտե՞ղ են բնակվել և ստեղծագործել Շառլ Ազնավուրն ու Ժորժ Կառվարենցը:
2.Ովքե՞ր են «Քեզ համար Հայաստան» երգի հեղինակները և էլ ինչ երգերի համահեղինակներ են նրանք:
3.Նշել Շառլ Ազնավուրի երգերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
1.Շառլ Ազնավուրի և Ժորժ Կառվարենցի մասին:
2.Որ «Քեզ համար Հայաստան» երգի հեղինակներն են Շ.Ազնավուրը և Ժ.Կառվարենցը: Երգը՝ 1988թ.-ի դեկտեմբերի 7-ին Հայաստանի ավերիչ երկրաշարժի արձագանքը եղավ:
3.Շ.Ազնավուրի երգերի մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Պատմել Շ.Ազնավուրի և Ժ.Կառվարենցի մասին:
Արտահայտիչ և մաքուր հնչերանգով երգել «Քեզ համար Հայաստան» երգը և ներկայացնել երգից ստացած տպավորությունները:
Երգել սիրված երգերից Շ.Ազնավուրի երգացանկից,համեմատել և մեկնաբանել:

Դաս. 27: Ալան Հովհաննես

ՈՒսուցանել Ռիչարդ Ռոջերսի «Երաժշտության հնչյունները» երգը:
ՈՒնկնդրել «Վասպուրական» երգը և հայկ. ժող. երգերի թեմաներով գրված դաշնամուրային մանրանվագները:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.
1. Ո՞վ է Ալան Հովհաննեսը:
2. Ո՞վ է «Երաժշտության հնչյուններ» երգի հեղինակը համանուն մյուզիքլից:
3. Որո՞նք են ալտերացիայի նշանները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
1. Ալան Հովհաննեսը ամերիկահայ կոմպոզիտոր է:
2. »Երաժշտության հնչյուններ» երգի հեղինակը Ռիչարդ Ռոջերսն է:
3. Ալտերացիայի նշաններն են՝ դիեզ, բեկմոլ, բեկար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Ներկայացնել Ա.Հովհաննեսին:
«Երաժշտության հնչյուններ» երգը երգել երկձայն,վերլուծել:
«Երաժշտության հնչյուններ» երգի նոտաները կարդալ և ցույց տալ ալտերացիայի նշանները:

Դաս. 28: ՈՒսուցանել հայկ. ժող. «Զատիկ» երգը:
ՈՒնկնդրել Զատկական երգեր, կազմակերպել «Զատկի» տոնակատարությունը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.
1. Ո՞րն է Զատկի տոնի խորհուրդը:
2. Ի՞նչ երգեր կան Զատկի տոնին նվիրված:
3. Ի՞նչ այլ տոն կա Հիսուս Քրիստոսին նվիրված:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
1. Զատիկը Հիսուս Քրիստոսի հարության տոնն է:
2. Քրիստոսի հարությունը ավետող երգեր:
3. Հիսուս Քրիստոսի Սուրբ ծննդյան տոնը նախորդում է Զատիկին: Տոնում ենք հունվարի 6-ին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Ներկայացնել ծիսական արարողակարգից դրվագներ:
Ստեղծել ռիթմական նվագակցություն և նվագակցել «Զատիկ» երգին:

Դաս. 29: ՈՒսուցանել «Զեյթունցիների քայլերգը» երգը:

ՈՒնկնդրել Իպոլիտով-Իվանովի «Հայկական ռապսոդիան»:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Հակիրճ ներկայացնել Միխայիլ Իպոլիտով-Իվանովի կյանքից դրվագներ:
2.Ո՞ր հայկական երգերն է մշակել Միխայիլ Իպոլիտով-Իվանովը:
3.Երգել «Զեյթունցիների քայլերգը», կատարել ռիթմական նվագակցություն, վերլուծել, նշել, բնույթը, տեսակը և այլն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Միխայիլ Իպոլիտով-Իվանովը ռուս կոմպոզիտոր է:
2.Որ Միխայիլ Իպոլիտով-Իվանովը մշակել է՝ «Կռունկ», «Ծիծեռնակ», «Զեյթունցիների քայլերգը» երգերը:
3. «Զեյթունցիների քայլերգը» առնական, խրոխտ և ուրախ տրամադրությամբ քայլերգ է, միջին տեմպով, հստակ ռիթմիկ պատկերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Պատմել Միխայիլ Իպոլիտով-Իվանովի մասին:
Ունկնդրել՝ «Կռունկ», «Ծիծեռնակ», «Զեյթունցիների քայլերգը» երգերի մշակումները և համեմատել այդ երգերի բնօրինակների հետ և նշել կատարված փոփոխությունների մասին:

Դաս. 30: ՈՒսուցանել Կոմիտասի «Ծողեր ջան» երգը:

ՈՒՆկնդրել երգի երգչախմբային և լարային կվարտետի կատարումները և Ա.Շտոգարենկոյի «Հայկական էսքիզները»:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ո՞վ է Անդրեյ Շտոգարենկոն:
2.ՈՒՆկնդրել Ա.Շտոգարենկոյի «Հայկական էսքիզներ» լարային քառյակից հատվածներ և որոշել, թե ո՞ր հայկական երգերն է օգտագործել լարային քառյակում և ի՞նչ փոփոխությունների է երթարկել այդ երգերը:
3.ՈՒՆկնդրել «Ծողեր ջան» հայկ. ժող. երգը երգչախմբի և լարային քառյակի կատարմամբ:Նշել այդ կատարումներում եղած նմանության և տարբերության մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Անդրեյ Շտոգարենկոն ուկրաինացի կոմպոզիտոր է:
2. Ա.Շտոգարենկոն իր «Հայկական էսքիզներ» լարային քառյակի մեջ օգտագործել է «Հոյ Նազան իմ» և «Ծողեր ջան» հայկ.ժող. երգերը:
3.Արտահայտչամիջոցները,որոնք օգտագործվել են «Ծողեր ջան» հայկ.ժող. երգի՝ երգչախմբի և լարային քառյակի համար կատարված մշակումներում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Հակիրճ ներկայացնել Ա.Շտոգարենկոյի ստեղծագործական ուղին:
ՈՒՆկնդրել,վերլուծել և ճանաչել Ա.Շտոգարենկոյի «Հայկական էսքիզներ» ստեղծագործության մեջ օգտագործված հայկ. ժող. երգերը:
Թվել հայկ.ժող.երգեր,որոնք մշակվել են երգչախմբի կամ լարային քառյակի համար:

Դաս. 31: ՈՒսուցանել «Веснянка» ուկր. ժող. երգը:

ՈՒնկնդրել Պ.Չայկովսկու «Դաշնամուրային կոնցերտից» մի հատված:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Երգել «Веснянка» ուկր.ժող.երգը և նշել այս երգի առանձնահատկությունը:
2. Ո՞ր այլազգի կոմպոզիտորներն են իրենց ստեղծագործություններում օգտագործել հայկական երգեր: Թվել այդ ստեղծագործություններից:
3. ՈՒնկնդրել Պ.Ի.Չայկովսկու «Դաշնամուրային կոնցերտը», նշել քանի՞ մասից է բաղկացած և ներկայացնել ստացած տպավորությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Որ «Веснянка» ուկր.ժող.երգը ունի փոփոխական չափ:
2. Որ Միխայիլ Իպոլիտով-Իվանովը, Միլիյ Բալակիրևը, Ա.Շտոգարենկոն և ուրիշներ իրենց ստեղծագործություններում օգտագործել են հայկական ժող.երգեր:
3. Պ.Ի.Չայկովսկու «Դաշնամուրային կոնցերտը» բաղկացած է 3 մասից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Ճիշտ և արտահայտիչ երգել «Веснянка» ուկր.ժող.երգը:
Նշել,թե ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել Միխայիլ Իպոլիտով-Իվանովի «Հայկական ռապսոդիա», Ա.Շտոգարենկոյի «Հայկական էսքիզներ» լարային քառյակի մեջ օգտագործված հայկ.ժող.երգերը:
Թվել Պ.Ի.Չայկովսկու ստեղծագործություններից մի քանիսը:

Թեմատիկ պլան

Դաս. 32-33: Համբարձման և Վարդավառի տոներ

ՈՒսուցանել հայկ.ժող. «Համբարձման երկուշաբթի», «Խնկի ծառ», «Սոնա յար» երգերը:
ՈՒնկնդրել հատվածներ Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերայից՝ «Համբարձում յայլա» և այլն:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.
1.Ներկայացնել Համբարձման և Վարդավառի տոները:
2.Նշել Համբարձման և Վարդավառի տոներին նվիրված երգերը:
3. Ո՞վ է գրել «Անուշ» օպերան և ո՞ր տոնին է նվիրված «Համբարձում յայլա» երգը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
1.Որ Համբարձման տոնը արտահայտել է մեռնող և հառնող Աստծո, բնության զարթոնքի, վերածնության գաղափարները:
Վարդավառը կամ Վարդեվառը, նշվում է,որպես քրիստոնեական տաղավար տոն՝ Քրիստոսի այլակերպության կամ Քրիստոսի պայծառակերպության, հայ ժողովրդական նախաքրիստոնեական և քրիստոնեական տոն է:
2.Համբարձման տոնին նվիրված երգերից են՝ «Համբարձման երկուշաբթի», «Խնկի ծառ» երգերը: Վարդավառին նվիրված երգերից է «Սոնա՛ յար», «Տաղ Վարդավառի» երգերը և այլն:
3.»Անուշ» օպերան գրել է Արմեն Տիգրանյանը, «Համբարձում յայլա» երգը նվիրված է Համբարձման տոնին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Հետազոտական աշխատանք կատարել Համբարձման և Վարդավառի տոների վերաբերյալ:
Երգել Համբարձման և Վարդավառի տոներին նվիրված երգերը, կատարել ռիթմիկ նվագակցություն և փոքրիկ բեմականացմամբ ներկայացնել այդ տոներից հետաքրքիր դրվագներ:
Ճիշտ ինտոնացիայով երգել «Անուշ» օպերայից «Համբարձում յայլա» երգը, համապատասխան պարային շարժումներ կատարել և նվագակցել երաժշտական որևէ գործիքով:

Թեմատիկ պլան

Դաս. 34: Կիսամյակի ամփոփում՝ դաս-համերգ,երաժշտական վիկտորինաներ, ժամանցներ և այլն:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.
1.Ամփոփել «Երաժշտությունը սահման չի ճանաչում» թեման:

2. Կատարել խմբային աշխատանք՝ առանձին խմբերով հակիրճ ներկայացնելով կոմպոզիտորների գործունեությունն ու ստեղծագործությունները, հայկ.ժող երգերը և ծեսերը:
3. Լրացնել խաչբառեր, կիրառել ՏՀՏ գործիքներով պատրաստված խաղեր և վիկտորինաներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.
1. Որ երաժշտությունը համամարդկային լեզու է,որը սահման և արգելք չի ճանաչում:
2. Սփյուռքահայ և այլազգի կոմպոզիտորիների մասին:
3. Ազգային երաժշտությունը և երգի սիրված երգերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
Ընկալել,սիրել,գնահատել և արժևորել ազգային երաժշտությունը: